Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 36

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը, բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակի համայնքային սեփականության 2023թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

3. Շարժական գույքը նվեր ընդունելու առաջարկության մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

4. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Է. Փարվանյան/

5. <<Աշտարակի մշակույթի պալատ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

6. Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 162-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

8. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Օշական բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը և Մ. Դալումյանը չեն մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Աշտարակի համայնքային սեփականության 2023թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական

ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով, հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքներն՝ ըստ համայնքի ենթակա կազմակերպությունների: Ինչպես նաև հաստատել հանձնաժողովների կողմից դուրս գրման ներկայացված գույքի ցանկը /փաթեթը գտնվում է ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնում/:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը և Մ. Դապումյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Շարժական գույքը նվեր ընդունելու առաջարկության մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արմեն Անթանյանի 05.03.2024թ. թիվ 2631 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Արմեն Անթանյանին սեփականության իրավունքով պատկանող GAZ մակնիշի 36 UC 927 հաշվառման համարանիշի /տիպարը՝ VS-22.02 /GAZ-3307// ավտոաշտարակն Աշտարակ համայնքին նվիրելու առաջարկությանը: Վերը նշված ավտոաշտարակի ձևակերպման ծախսերը կատարել համայնքի բյուջեի հաշվին: Նշված գործընթացն ավարտելուց հետո ավտոաշտարակն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Բարեկարգում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը: Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը և Մ. Դապումյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ Է. Փարվանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակի

համայնքային սեփականություն հանդիսացող Օշական գյուղում գտնվող անշարժ գույքից (հասցե՝ Մաշտոցի փողոց 105, անշարժ գույքի սեփ. վկ.՝ N 27032020-02-0035) 160մ^2 տարածք (2-րդ հարկ) անհատույց օգտագործման իրավունքով ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ և Հայաստանի սոցիալական աշխատողների Ասոցիացիայի կողմից ստեղծված ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց և ընտանիքներին սոցիալ - հոգեբանական աջակցություն մատուցող կենտրոնին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը և Մ. Դապումյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - <<Աշտարակի մշակույթի պալատ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34, 37 հոդվածների պահանջներով, հաստատել <<Աշտարակի մշակույթի պալատ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի: Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա որոշումը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի եզրակացությունը, ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Մ-3 միջպետական ավտոճանապարհի /ԿՄ 35+500-39+535/ հատվածի հիմնանորոգման հետ

կապված ծառերի մի մասը հատելու, իսկ մյուս մասն էլ վերատնկելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Միաժամանակ նշեց, որ շինարարական աշխատանքների ավարտից հետո հատված ծառերի փոխարեն տնկել առավել բարձրարժեք ծառեր:

16 – ԿՈՂՄ, 1 - ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 162-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 162-Ն որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ առաջարկություններին:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 9 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարել կից ընդլայնվող հողամասերի սեփականատերերին:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 10 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արտուշ Միրզախանյանի 14.02.2024թ. N 1750 դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Ա. Մանուկյան փողոցում գտնվող, Արտուշ Արսենի Միրզախանյանին սեփականության իրավունքով պատկանող առևտրի և սպասարկման օբյեկտին կից, 02-001-0105-0001 ծածկագրից 6,0քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը օբյեկտին լրացուցիչ մուտք ապահովելու նպատակով կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Արտուշ Արսենի Միրզախանյանին տրամադրելու 50 տարի ժամկետով՝ տարեկան 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ վճարով:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Օշական բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.02.2024թ. N 2/փ-87 և 13.02.2024թ. N 2/փ-75 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում և Օշական բնակավայրում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, 02-001-1993-0001 ծածկագրից 0,0621հա ջրային հողեր նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության, համայնքային սեփականություն հանդիսացող 02-001-0861-0100 ծածկագրից 0,1455հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը ջրային նպատակային նշանակության գետեր գործառնական նշանակության և 02-001-0083-0049 ծածկագրից 0,0049հա բնակավայրերի հողեր նպատակային նշանակության այլ հողամասի նպատակային նշանակությունը ջրային նպատակային նշանակության գետեր գործառնական նշանակության փոփոխությունները:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-113-0231-0011 ծածկագրով 0,4591հա մակերեսով հողամասից 0,01977հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի և համայնքային սեփականություն հանդիսացող 02-113-0231-0001 ծածկագրից 0,02181հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2024 թվականի ապրիլի 15-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի մարտի 15-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ **Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ